Պարոն/Տիկին Ա. Կարապետյան ին
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավարական խորհրդակցությանը ներկայացնելու համար

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գլխավոր քարտուղար Ա. Սաֆարյանին

Տիկին Ն. Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Ա. Սաֆարյան

«11» 06 2025թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Աշխատակցի անունը, ազգանունը՝**

– Սամվել Պետրոսյան,

2. **Զբաղեցրած պաշտոնը –**

- հանձնաժողովի իրավաբանական և լիցենզավորման վարչության լիցենզավորման բաժնի պետ,

3. **Գործուղման վայրը և ժամկետները – Աթենք** (Հունաստան), համապատասխանաբար 2025 թվականի հունիսի 2-ից 6-ը.

4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում)** – Էներգետիկ համայնքի քարտուղարության Էներգետիկայի եվրոպական կարգավորողների խորհուրդ (ECRB):

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)** – էներգետիկ համայնքի կարգավորող խորհրդի (ECRB) էլեկտրաէներգիայի աշխատանքային խմբի 65-րդ հանդիպմանը և Էներգետիկ համայնքի էլեկտրաէներգիայի 30-րդ համաժողովին մասնակցություն.

6. **Քննարկված թեմաները (հարցերը)** – էլեկտրաէներգետիկական շուկաների զարգացումները էներգետիկ համայնքում և ԵՄ-ում.

7. **Հանդիպումները, ելույթները. – էներգետիկ համայնքի կարգավորող խորհրդի էլեկտրաէներգիայի աշխատանքային խմբի 65-րդ հանդիպումը** սկսվեց նախորդ հանդիպման արձանագրության հաստատմամբ, որից հետո խորհրդի կողմից ներկայացվեցին ԵՄ-ի և Էներգետիկ համայնքի էլեկտրաէներգետիկական շուկաներում տեղի ունեցած իրադարձությունները:

Այնուհետև, աշխատանքային խմբի ներկայացուցիչների կողմից ներկայացվեցին համապատասխան երկրի շուկայում տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունները: Իմ կողմից ներկայացվեց «Էներգետիկայի մասին» օրենքում, շուկայի կանոններում տեղի ունեցած փոփոխությունները, ինչպես նաև ներկայացվեցին շուկայի ազատականացման ուղղությամբ իրականացվող գործընթացները և դրանց արդյունքները: Հանդիպման ընթացքում տեղի են ունեցել նաև ծավալուն քննարկումներ ներկայացված թեմաների վերաբերյալ՝ հարց ու պատասխանի ձևաչափով:

Ուշագրավ էին հատկապես հետևյալ երկրների ներկայացուցիչների ելույթները.

Վրաստան. Էներգետիկ համայնքի և EU4ENERGY ծրագրերի ղեկավարությունների կողմից տեխնիկական աջակցություն է իրականացվել Էներգետիկ համայնքի էլեկտրաէներգիայի փաթեթի (ԵՄ էլեկտրաէներգիայի 4-րդ փաթեթի Էներգետիկ համայնքի առանձնահատկությունների հաշվառմամբ տարբերակ)՝ տրանսպոզիցիային ազգային օրենսդրությունում ներառելուն: Իսկ կարգավորող մարմնի և կայուն զարգացման նախարարության աջակցությամբ մշակվում է վերականգնվող աղբյուրներից էներգիայի ստացման խրախուսման և օգտագործման մասին օրենքի նախագիծը, որով կներդրվեն էլեկտրաէներգիայի ծագման երաշխիքի և կանաչ սերտիֆիկատների տրամադրման մեխանիզմները: Հաշվեկշռման շուկայի ներդրումը երկարաձգվել է մինչև սույն թվականի հուլիս ամիս:

Կարգավորող մարմինն ընդունել է պատասխանատվության ենթարկելու կանոններ, որը հնարավորություն կտա խախտումների դեպքում ավելի կանխատեսելի դարձնել պատասխանատվության միջոցները:

Սերբիա. Կարգավորողի կողմից սահմանվել է առևտրի գոտիների միջև հզորության տեղակայման կարգն ու մեթոդոլոգիան, որը վերաբերում է Սերբիայի, Հյուսիսային Մակեդոնիայի, Բոսնիայի և Հերցեգովինայի, Մոնթենեգրոյի, Ռումինիայի, Բուլղարիայի և Խորվաթիայի հաղորդողների առևտրային գոտիներին: Ընդունվել է հզորությունների տեղակայման և գերբեռնումների կառավարման վերաբերյալ ԵՄ 2015/1222 կարգավորումը ազգային օրենսդրությունում կիրառելու վերաբերյալ իրավական ակտ: Միաժամանակ փոփոխություններ է կատարվել շուկայի կանոններում, որով առևտրի ժամանակահատվածը է սահմանվել 15 րոպեն, ինչը հնարավորություն կտա առևտուր անել ավելի իրական ժամանակում և խուսափել շեղումներից:

Մոնտենեգրո. Իտալիայի և Մոնթենեգրոյի կարգավորողները, հաղորդողները և շուկայի օպերատորները պարբերաբար քննարկում են հզորության տեղակայման մեխանիզմների մասին, քանի որ երկու երկրների միջև ստեղծվելու է հզորության հաշվարկման ռեգիոն (capacity calculation mechanism): Միաժամանակ, կառավարությունը նախաձեռնել է ԵՄ 2019/944 կարգավորումը Մոնտենեգրոյում կիրառելու գործընթաց:

Էներգետիկ համայնքի էլեկտրաէներգիայի 30-րդ համաժողով.

Համաժողովում ներկայացվեցին էներգետիկ համայնքում իրականացվող իրադարձությունները, սպասվող փոփոխությունները և տեղի ունեցան պանելային քննարկումներ առանցքային խնդիրների, ԵՄ օրենսդրության տրանսպոզիցիայի ընթացքում առաջացած խոչընդոտների և այլ թեմաների վերաբերյալ (հարց ու պատասխան):

Համաժողովը վերահաստատեց էլեկտրաէներգիայի ինտեգրման փաթեթի կիրառման կարևորությունը և դրա դերը շուկայի ինտեգրման արագացման գործում, մասնավորապես՝ ԵՄ միասնական օր առաջ և օրական շուկաների միասնականացնելու միջոցով: Փոխադարձության հաստատումը, մասնավորապես՝ Էներգետիկ համայնքի պայմանագրային կողմերի բոլոր շահագրգիռ կողմերի համար նույն իրավունքների և պարտավորությունների ապահովումը, նշվեց որպես շուկաների միասնականացման գործընթացում առաջընթացի բանալին: Ֆորումը ընդգծեց էլեկտրաէներգիայի ինտեգրման փաթեթի իրականացման ռազմավարական կարևորությունը՝ թե՛ ԵՄ անդամակցության գործընթացի, թե՛ ձեռքբերումների համար:

Համաժողովը տեղեկացվեց Աճի Ծրագրի և ԵՄ անդամակցության գործընթացի շարունակական արագացման մասին, որտեղ էներգետիկ անցումը և կլիմայական քաղաքականությունը հիմնական քաղաքականության առաջնահերթություններն են: Շուկայի ինտեգրումը ընդգծվեց որպես կարևորագույն գործոն ածխածնազրկումը արագացնելու և Էներգետիկ համայնքում էներգետիկ անվտանգությունն ապահովելու համար: Այն կարևոր տեղ է զբաղեցրել ինչպես անդամակցության գործընթացում, այնպես էլ Արևմտյան Բալկանների հինգ պայմանագրային կողմերի, ինչպես նաև Ուկրաինայի և Մոլդովայի հետ համաձայնեցված բարեփոխումների օրակարգերում: Եվրոպական հանձնաժողովը կշարունակի զգալի ֆինանսական ռեսուրսներ տրամադրել համապատասխան ներդրումները աջակցելու համար

Համաժողովը նշեց, որ 2026 թվականի հունվարի 1-ից սկսած՝ Պայմանագրային կողմերից ԵՄ էլեկտրաէներգիայի ներկրման նկատմամբ կիրառվում է Ածխածնային սահմանային կարգավորման մեխանիզմը, ամբողջական արժեքով, առանց անհապաղ բացառությունների նախատեսված լինելու: Համաժողովը ընդգծեց, որ՝ ինչպես ենթադրվում է վերոնշյալ կանոնակարգով, ներկայումս չկա որևէ տեխնիկական լուծում, որը հնարավորություն կտա զուգահեռաբար իրականացնել շուկաների կապը և կիրառել այդ մեխանիզմը, և կոչ արեց Եվրոպական հանձնաժողովին մինչև 2026 թվականի հունվարի 1-ը շտապ փնտրել կառուցողական լուծումներ՝ բոլոր շահագրգիռ կողմերի կողմից բարձրացված մտահոգությունները լուծելու համար:

Համաժողովը նշեց, որ սպառողների ակտիվ մասնակցությունը էներգետիկ շուկայում բարձրացնում է ապաածխածնացումը և մրցունակությունը, ի վերջո նպաստելով մատչելի էներգամատակարարմանը և շուկայի ընդհանուր արդյունավետությանը: Հաշվի առնելով, որ գնագոյացման միջամտությունները կարող են խոչընդոտել սպառողների ակտիվ մասնակցությանը շուկայում, համաժողովը կոչ արեց Պայմանագրային կողմերին առաջնահերթություն տալ վերջնական օգտագործողի գների կարգավորման փուլային վերացմանը՝ համաձայն էլեկտրաէներգիայի մասին հրահանգի: Համաժողովը ընդգծեց, որ խոցելի և էներգախնայող քաղաքացիների պաշտպանությունը պետք է ապահովվի նպատակային և արդյունավետ եղանակով, և կոչ արեց Պայմանագրային կողմերին հետագայում մշակել երկարաժամկետ միջոցառումներ, որոնք ավելի կայուն կերպով կլուծեն էներգետիկ աղքատության խնդիրը: Համաժողովը կոչ արեց կարգավորող մարմիններին՝ համակարգի օպերատորների, շուկայի օպերատորների և շուկայի այլ մասնակիցների հետ սերտ համագործակցությամբ, շարունակել կատարելագործել այն կարգավորող շրջանակները, որոնք խթանում են սպառողների ակտիվ մասնակցությունը էլեկտրաէներգիայի շուկայում:

Համաժողովը կոչ արեց կարգավորող մարմիններին՝ համակարգի օպերատորների և շուկայի մասնակիցների հետ սերտ համագործակցությամբ, շարունակել կատարելագործել կարգավորող շրջանակները, որոնք խթանում են սպառողների ակտիվ մասնակցությունը էլեկտրաէներգիայի շուկայում:

Համաժողովը ողջունեց նշանակված էլեկտրաէներգետիկական շուկաների օպերատորների (NEMO) ակտիվ համագործակցությունը շուկաների միասնականացման ինտեգրման պլանի (MCO IP) մշակման և դրա ACER-ին հաստատման ներկայացնելու գործընթացի արագացման գործում: Ֆորումը տեղեկացվեց, որ NEMO-ները ներկայումս ACER-ի հետ պարզաբանում են ներկայացված MCO IP-ի սպասվող փոփոխությունները:

Համաժողովը նշեց, որ կուսումնասիրվի MCO IP-ի ավարտական մշակումը արագացնելու համար տեխնիկական աջակցություն տրամադրելու հնարավորությունը, եթե NEMO-ները դա պահանջեն: Համաժողովը ընդունեց, որ MCO IP-ի հաստատումը, դրա տեղափոխման հետ մեկտեղ, կարևոր է Էներգետիկ համայնքի հաղորդողների օպերատորների և NEMO-ների օր առաջ և օրական շուկաներին պայմանագրային հիմունքներով միանալու ապաշրջափակման համար:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը – հետագա համագործակցություն և էլեկտրաէներգիայի աշխատանքային խմբի դասընթացներին մասնակցություն:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները -

Առաջարկվում է ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040 թվականը) իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցով նախատեսված «Էլեկտրաէներգետիկայի մասին» և «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» օրենքների նախագծերի մշակման ժամանակ հաշվի առնել ԵՄ կարգավորումներով նախատեսված մուտքի իրավունքի, սպառողներին մատակարարման անխափանության (այդ թվում խոցելի սպառողների պաշտպանության), աջակցության մեխանիզմների, պահուստային հզորությունների վերաբերյալ և այլ դրույթները:

ԵՄ վերոնշյալ կարգավորումների կիրառումը, առանձին հարցերի քննարկմանը ՀՀ ներկայացուցիչների ներգրավումը կնպաստի հետագայում նշված կարգավորումներով սահմանված շուկայական մեխանիզմների ներդրումը Հայաստանում, ինչը կխթանի էլեկտրաէներգետիկ շուկայում մրցակցության զարգացմանը և կհանգեցնի արդյունավետության բարձրացմանը:

Գործուղվող ---------- 11.06.25թ. ---------- ***Ս. Պետրոսյան***

(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N
1230-Ն որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը __Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով___

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 395-Գ.Ք, 15.05.2025թ**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի իրավաբանական և լիցենզավորման վարչության լիցենզավորման բաժնի պետ՝ **Սամվել Պետրոսյանին**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը **ք.Աթենք /Հունաստան/**

5. Գործուղման ժամկետները **02.06.2025-06.06.2025 թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ**, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ**, օրապահիկ և այլն**)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Սամվել Պետրոսյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար- հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս)		-
	Ավիատոմսի արժեքը (դրամ)		-
Դիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)		-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով եվրո)	61	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	26,394	
	Օրերի քանակը	5	
	Ընդամենը (դրամ)	131,970	131.970
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		-
	Այլ ծախսեր (*նկարագրել*)		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		131,970	131.970

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

Ամսաթիվ

09. 06.2025թ.